



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ  
ՆԱԽԱՐԱՐ  
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ



«03» 10 2019թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000080

Ձեռնարկողը՝

«Լույս Գազ» ՍՊԸ  
Ք. Չարենցավան

Գործունեությունը՝

Չարենցավանի խճուղի N 14 և 16 հողամասերում  
ավտոգազալցաճնշակայանի կառուցման շրջակա  
միջավայրի վրա ազդեցության նախնական  
գնահատման հայտ  
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնդյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000080

<<03>> 10 2019թ.

**Չարենցավանի խճուղի N 14 և 16 հողամասերում  
ավտոգազալցաճնշակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա  
ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝ <<Լույս Գազ>> ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝ Նախնական գնահատման հայտ  
Գ կատեգորիա

Տեղադրման վայրը՝ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք, գ.Ալափարս,  
Չարենցավանի խճուղի թիվ 14 և 16 հողամասեր

Ավտոգազալցաճնշակայանի կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել Կոտայքի մարզի Չարենցավան համայնքում, Ալափարս գյուղի Չարենցավան խճուղի թիվ 14 և 16 հողամասերում՝ «Լույս Գազ» ՍՊԸ-ի սեփական հողատարածքում (N17052018-07-0034 և 18042018-07-0008 անշարժ գույքի վկայականներ):

Թիվ 14 հողամասի մակերեսը կազմում է 0.482547 հա, իսկ թիվ 16 հողամասինը՝ 0.38611 հա: Գործունեության տարածքի հողի նպատակային նշանակությունը բնակավայրի է, հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:

Գործունեության նպատակն է կառուցել ավտոմեքենաների սպասարկման համար գազի լցակետ՝ շուրջօրյա աշխատանքային ռեժիմով:

Համաձայն նախնական հայտի նախատեսվող ավտոգազալցաճնշակայանը կառուցվելու է Ա4 միջպետական ճանապարհի աջ և ձախ կողմերում գտնվող հողատարածքներում:

Նախնական գնահատման հայտով նախատեսվում՝ թիվ 14 հողամասում գազի լցակետի ծածկոցի, սպասասրահի, հակահրդեհային ստորգետնյա ջրավազանի և շանթարգելի կառուցում: Թիվ 16 հողամասում նախատեսվում է գազի լցակետի ծածկոցի, սպասասրահի, կոմպրեսորային բլոկի, պահեստային բլոկների, գազի նախնական կուտակիչի, հակահրդեհային ստորգետնյա ջրավազանի, շանթարգելի, գազակուտակիչների ստորգետնյաբունկերի (ռեզերվուար) կառուցում:

Նախատեսվող գործունեության վայրը երկար տարիների ընթացքում ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների: Ըստ նախնական գնահատման հայտի մինչև գործունեության իրականացումը նախատեսվող գործունեության տարածքում կատարվել են



փոսալցման և հարթեցման աշխատանքներ՝ համաձայն Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ղեկավարի կոմից տրված (14.02.2019թ, N175-19 և 13.02.2019թ.N170-19) գրությունների: Նախատեսվող գործունեության տարածքում բացակայում է կենսաբազմազանությունը՝ կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչները: Հայցվող տարածքի մոտակայքում բնության, պատմամշակութային հուշարձաններ, հատուկ պահպանվող տարածքներ չկան:

Նախատեսվող գործունեության տարածքում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախատեսվում է օգտագործել տեխնիկական միջոցներ՝ էքսկավատոր, կռունկ, բեռնատար մեքենա, ինքնաթափ, բետոնախառնիչ: Աշխատանքները տևելու են 24 ամիս:

Շինարարության աշխատանքների կատարման ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, բնառեսուրսներից ջուր՝ տարածքների ջրցանի, հողի (գրունտի) խոնավացման, շինանձնակազմի խմելու կենցաղային և տնտեսական կարիքների համար: Շինարարական աշխատանքների ընթացքում ջրամատակարարումը կատարվելու է հատուկ նախատեսված ավտոմեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով: Համաձայն «Վիոլա Ջուր» ընկերության հետ կնքված պայմանագրի, շահագործման փուլում ջուրը փակ շրջանառու համակարգով օգտագործվելու է նաև ԱԳԼՃԿ-ի կոմպրեսորների հովացման համար:

Տարածքում կոյուղու ցանցի բացակայության պատճառով առաջացող կենցաղային հոսքաջրերը բակային ցանցով հավաքվելու են նախատեսվող կեղտաջրերի անջրթափանց (սեպտիկ) հոր(9,5մ<sup>3</sup>), որտեղից հատուկ մեքենաների միջոցով հեռացվելու են կոյուղու ցանց:

Շինարարության և շահագործման փուլերում առաջանալու են տարբեր տեսակի թափոններ՝ չտեսակավորված կենցաղային աղբ, որը տեղափոխվելու է աղբավայր և շինարարական աղբ (600 կգ), որը պայմանագրային հիմունքներով ամբողջությամբ տեղափոխվելու է համայնքի կողմից հատկացված վայր, ինչպես նաև գրունտ՝ հողային հանվածքի տեսքով, որն օգտագործվելու է տեղում:

Շահագործման փուլում առաջանալու են նաև 3-րդ դասի արտադրական թափոններ (180կգ/տարի, որից՝ 120 կգ յուղ և 60 կգ սիլիկագետ): Թափոնները պահվելու են հատուկ մետաղական տարաներում: Յուղորսիչներում կլանված յուղը խոնավությունից մաքրվելուց հետո օգտագործվելու է տեղում՝ գազալցակայանի սարքավորումների շարժիչների յուղման նպատակով: Օգտագործված, տոկսիկ նյութեր չպարունակող սիլիկագետը սանիտարական ծառայությունների թույլտվությունից հետո, տեղափոխվելու է աղբավայր:

Շինարարական աշխատանքների ընթացքում կատարվելու է 828մ<sup>3</sup> հողային աշխատանքներ (հանույթ և ետլիցք), որից 328մ<sup>3</sup>-ը հողաբուսաշերտ է: Այն պահպանվելու է տարածքում, հատուկ նախատեսված վայրում, ծածկված վիճակում, շինարարական աշխատանքների ավարտից հետո օգտագործվելու է տարածքի հարթեցման, բարեկարգման և կանաչապատման համար:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է 400մ<sup>2</sup> մակերեսով կանաչապատում և բարեկարգում: Կանաչապատումը կատարվելու է տարածաշրջանին բնորոշ սիզախոտերով և թփերով, որի ոռոգման համար ջուրը բերվելու է ավտոցիստեռներով՝ պայմանագրային հիմունքներով:

Շահագործման փուլում ավտոգազալցաճնշակայանի գազամատակարարումն կատարվելու է «Չարենցավան» ԳԲԿ-ն սնող (Dպ-150) կողմնատար գազատարից՝ Երևան-Սևան-Երևան M4 մայրուղու վերգետնյա անցումով: Համաձայն նախնական հայտի օգտագործվող հերմետիկ սարքավորումները, հսկիչ սարքերը, ավտոմատ կարգավորիչները, գազի սարքավորումները (70մ<sup>3</sup>) և այլ սարքերը համապատասխանում են գազալցաճնշակայանի տեխնիկական բնութագրերին, սահմանված անվտանգության նորմերին և պահանջներին:



Նախատեսվող գործունեությունը կատարվելու է երկարամյա մարդածին ազդեցության գոտում, ինչը չի առաջացնելու շրջակա միջավայրի վրա լրացուցիչ ազդեցություններ: Ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների, թափոնների տեղափոխման, յուղերի, ներկերի, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են օդային ավազանի, հողային ռեսուրսների աղտոտումից պահպանման, ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում:

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջրցանի կատարում,

- փոշու արտանետումների նվազեցման նպատակով հողի և այլ շինանյութերի տեղափոխում՝ ծածկված թափքով մեքենաներով,

- հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու համար սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով,

- հողաբուսաշերտի պահպանում ՀՀ կառավարության 08.09.2011թ. թիվ 1396-Ն որոշման պահանջներին համապատասխան (հողի բերրի շերտի ծածկում խոտաբույսերով, հողաթմբերի ձևավորում և այլն), բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը և որակական հատկանիշների վատթարացումը,

- տարածքում ժամանակավորապես կուտակվող թափոնների հավաքում ասֆալտբետոնե հարթակի վրա՝ ծածկված վիճակում,

- օգտագործումից առաջ հեղուկ նյութերի տեղափոխում շինարարական հարթակ և պահում հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- շինարարության ընթացքում տեխնիկայի վառելիքի լիցքավորման և յուղման իրականացում շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում,

- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերի ուղղորդում՝ 10մ<sup>3</sup> ծավալով պարզարան,

- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և շինարարությանն առնչվող նորմերի պահպանում,

- անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամի, մառախուղ և այլն) դեպքում վերահսկողության ուժեղացում և այլն:

**Պատճառաբանական եզրահանգումներ.** հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել են անշարժ գույքի կադաստրի կոմիտեն, Կոտայքի մարզպետարանը, քաղաքաշինության կոմիտեն, արտակարգ իրավիճակների, տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունները, շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումները: Հայտում առկա է «Հարշին նախագիծ»՝ ՍՊԸ-ի (լիցենզիա 13389) կողմից 2 հողամասերի վերաբերյալ նախագծային փորձաքննության դրական եզրակացությունները, տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարծիքները:

Համաձայն անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից տրված տեղեկանքի՝ նախատեսվող գործունեության տարածքը մոտակա բնակավայրերից, համարակալական շինություններից և այլ շենքերից գտնվում է թույլատրելի հեռավորության վրա (ամենամոտ հեռավորությունը՝ 152մ է): Համաձայն նախնական գնահատման հայտի գազալցակայանին



Չկմ-ից մոտ ավտոգազալիցքավորման կայաններ կամ այլ լցակայաններ չկան: Նախատեսվող գազալցակայանի ստորգետնյա բունկերի հեռավորությունը Մ4՝ Երևան--Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ճանապարհից կազմում է 35,343մ, <1,Մ4-Ջրաբեր Չարենցավան ճանապարհից՝ 20մ, Մ4 Ֆանտան ճանապարհից՝ 20մ:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Չարենցավան համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել: Հայտը մի քանի անգամ լրամշակվել է որի պահանջներից ելնելով կատարվել է գազի ստորգետնյա բունկերի տեղադիրքի փոփոխություն, ինչի արդյունքում հեռավորությունները համապատասխանեցվել են ՀՀ կառավարության կողմից սահմանված ԱԳԼԾԿ-ի կառուցման թույլատրելի հեռավորությունների պահանջներին:

### Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:

2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել ՀՀՇՆ IV-11.05.02-99, ՀՀՇՆ IV-12.03.01-04 շիննորմերի և 2005 թ. դեկտեմբերի 22-ի ՀՀ Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին>> N2399-Ն և 2008թ. օգոստոսի 28-ի ՀՀ Ավտոգազալիցքավորման ճնշակայանների կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին>> N1101-Ն ՀՀ կառավարության որոշումներով սահմանված պահանջները և շինարարական նորմերը:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Լույս Գազ>> ՍՊԸ կողմից ներկայացված Կոտայքի մարզի Չարենցավան համայնքում, Ալափարս գյուղի Չարենցավան խճուղի N 14 և 16 հողամասերում ավտոգազալցաճնշակայանի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ



Թ. Նուրիջանյան